


# Պ Ա Յ Ն

# Հայրենեաց

ՅԱՐԱԹԱԹԵՐԻԹ



ՀԱՅԻՆ  
ՊԱՐՏԱԿԱՆ  
ՄԱՍԻՆՈՎԵՐ  
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ  
AMERICAN HAI PUBLISHING Co  
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.

## Ա Ջ Պ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

### ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Օրուան Հարցը. — Օժման Հանդէս Ուսարի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ. — Ազգային Բրնիկ. — Մեղրէի ազգային երկսեռ Գոյէճը. — Նամակ Վանէն. — Նամակ Պուլղարիէն (Յիլիպէ). — Նամակ Պոստօնէն. — Ներքին լուրեր. — Բաղադրական. — Բանասիրական (Շարժումը կեանք է և կեանքը շարժում):

### Օ Ր ՈՒ Ա Ն Հ Ա Ր Ճ Ը

Հայ ազգը դարերէ ի վեր անընդհատ սեպտեմբր հարուստներու սակ իր գոյութիւնը պահպանելու և յարած ու փորած մնալով նուիրական սրբութեան մը, իր ժամ ու պատարագին: Ի՞նչ յարգանք, ի՞նչ պատկառանք դէպի Հայաստանի այն խոնարհ, համեստ վայրերը. ի՞նչ գործադրանքով, ալի աղանդներով թրջելով սուրբ հոգիները: Աւերակ տաճարներ, աւերակ ազգ: Ապրող աւերակներ, ապրող ազգ: Պահած ենք ու ապրած, զի անոնց հիմերը վարդան ու Ղեւոնդներ յարկանանքի դիակներով դրուած է:

Տարաբաղդ ազգ ու զարմանալի ժողովուրդ: Մենք մեր ձեռքով, մեր ազատութիւնը, մեր իշխանութիւնը, մեր թագաւորը տարած ու օտարին մտանած ենք, բայց երբ այդ օտարը եկած է խորտակելու մեր տաճարները, խելու մեր կրօնը. բնած ենք՝ մեր կաշիները կրօնաճ մեզնէ հանել, բայց մեր կրօնը՝ ո՛չ ու փառաւոր Աւարայրն ստեղծած ենք:

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԵԱՆՔԸ ՅԱՐՏՈՒՄ Է՝  
ԵՒ ՅԱՐՏՈՒՄԸ ԿԵԱՆՔ  
(Շարունակութիւն Նախորդ Թուէն)

Յրանսան այլասեռելու վրայ է կ'ըսենք յաճախ, հոս ևս անհատական կեանքի ամեն մէկ ձգտումը վերլուծուածը բնեղով է որ կուգանք կը հասնինք այդ աննպաստ եզրակացութեան:

Միւս կողմէ մեզու մեր խօսակցութեան աւարկան է թէ թուրքը յետամնաց ազգերու կարգէն է, նա անընդունակ է քաղաքակրթութեան, զարգացումէ զուրկ է, անոր համար կը պակսին այն վեճ ու վսեմ յատկութիւնները, որոնցմով ազգերը կ'աջնուանան:

Եթէ վերե յիշուած ազգերու ներքին կեանքին այնքան ծանօթ չենք եւ չենք կարող անոնց բնասանկան շրջանի ուսումնասիրութիւնը ընել, թուրքին համար այդ գիտարութիւնը չունինք: Մենք անոր ամենամօտ դրացին՝ իսկոյն կրնանք իր ձգտումներուն ու շարժումներուն մէկ տարբազարութիւնը ընել:

Ի՞նչ է թուրքը: Իբրև անհատ նա ինքնութիւն չունի, աւելի բնագոյով կը կառավարուի՝ քան բանականութեամբ:

Ու հինգ հարիւր տարուան ստրկութեան մէջ ապրած ենք գրկած մեր ժամն ու աւերակը: Ու ներկան ա՛լ ևս այդ հաւատք չէ՞ որ Հայը կը սահէ մայրենի աշխարհին մէջ Հայ:

Բաղադրական ազատութենէ զուրկ, ստրկութեան բնուան սակ ազատութեան ձգտող ու սիրահար ազգ մըն ենք: Ու մենք մեր մէջ ստեղծած ենք իշխանութիւն մը, կրօնական իշխանութիւնը, կաթողիկոս, Պատրիարք, Առաջնորդ ու Հովիւ, սակայն անոնք ոչ թէ ինքնակոչ միապետներ են, այլ ընտրուած են ժողովրդի ձայն ու քուէով: Ասոր ապացոյց մը չէ՞ Սոհմանաբաթի թեան ստեղծուելը: Ո՞վ կընարէ կաթողիկոսը. չէ՞ որ ազգային ընդհանուր պատգամաւորութիւնն է որ իր քուէն կուտայ անոր: Աւ միշտ ալ քաղաքակրթ աշխարհի առջև Հայ ազգ ներկայացնողը այդ կրօնական իշխանութիւնն է:

Սորտակել, քանդել, սպաննել այդ ինքնուրուի, օգտակար է մեզ: Անշուշտ ո՛չ. բարեկարգել, ուղղել ու շտապել պէտք է: Կրօնական իշխանութեան պետ մը էն իր սուր քննադատողներէն մինն եղանք: Ինչո՞ւ արեւօք պատկառանքը կը նայէինք դէպի նախորդին դահլը: Պարզըն բանք, ինչո՞ւ կը հիանայինք Սրբազան Իզմիրլեանի տոկուն կամքին վրայ, ու Օրմանեանը կը քննադատենք: Ուրեմն մեզ առաջնորդող ուղղութիւնն ո՛չ քանդել, ո՛չ աւերելն է, և ոչ ալ մենք կը մըտնենք անպայման կերպով կղերականութիւնը պաշտպանելու պահանջողական դերին մէջ, այլ մեր ջանք ու ուղղութիւնը բարեկարգուած ու զարգացած եկեղեցականութիւն մը ստեղծելու մէջն է:

Իբրև ընկեր նա անպարծ է, ստախոս, սպառնացող, սխալալ և քինակեղի: Իբրև ընտանիքի հայր՝ մենք կը տեսնենք զայն ծոյլ ու մեղկ, ծնողական պարտականութիւններուն բոլորովին անգիտակ, անոր գաւազները կը մեծնան այնպէս՝ ինչպէս վայրի պտղատու ծառերը անտառին մէջ: Կրօնքի մէջ նա մըտնող ու անպաշտ է, կուրօրէն կը հաւատայ, իր գիտակցութիւնը սեղմ շրջան մը ունի և իր ըմբռնումներն ու հայեացքներն ընդլայնելու մէջ խղճահարութեան նման բան մը կը զգայ: Գեղեցիկը կ'արհամարհէ, ազնուութեան վրայ զաղափար չունի և բարին բնաւ չկայ իրեն համար: Եթէ նոյն իսկ այդ բարեմասնութեանց մօտեցող գոյժառնութիւններուն մէջ ալ գտնուի, նա իր այդ արարքներու գիտակցութեանէն զրկուած է. անոր հոգին մշտնաջան մէջ է, միաբը սահմանափակ եւ կրքերը ստորին:

Թուրք անհատն թուրք ազգութեան կ'անցնինք և ամեն խաւի մէջ յատկութիւնները մ'իւնոյնք կը գտնենք: Երկրի վրայ չէ եղած սիրապետութիւն մը որ իր հոգեկան և մտաւորական ձգտումներուն մէկ գրաւականը թողած չըլլայ ապագայ սերնդին: Հին Ասորիտանի աւերակներէն ելլող հնութիւնները մեզ կը

Մենք ամեն կերպով կը համարինք այնպիսի սղատամիտ եկեղեցականներ, որոնք յեմերէն կը քարոզեն «Արաաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, կայ Հայութիւն, կայ փրկութիւն», մեր հիպոպոմը կը յայտնենք այնպիսի եկեղեցականներու, որոնք անկեղծ կերպով նախորդած են ազգային սուրբ Դատին:

Անոնք ժողովրդէն դուրս չեն, տեսնեք ալ նոյն ժողովրդի որդիներն են, ժողովրդի ձայնն է որ կրնար զանոնք: Ընտանք արժանաւորն ու զարգացածը, ընտանք ազատամտն ու նուիրուածը: Իսկ դէմ ենք ու դէմ պիտի ըլլանք խաւարամիտ անհատին: Բայց բնաւ չենք մերժել երկեղեցականութեան պէտքութիւնը:

Թէ այսպէս թէ այնպէս, պէտք ունինք ժողովրդին խիստապէս առաջնորդող Հովիւներու, եկեղեցականներու:

Պէտք ունինք զարգացած, երիտաւոր, եկեղեցական, պէտք ունինք նորնայ Տէր Ղեւոնդ վարդապետ Մարգարէի ստեղծած նման անձնագոյններու:

Կ'ըզակացնենք ըսելով՝ ո՛չ թէ պէտք է խորակենք մեր կղերականութիւն, այլ պէտք է ջնանք բարեկարգել:

Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք Արժ. Տէր Ղեւոնդ վարդապետին, և կը մաղթենք որ մեր յոյսերը արդարացնէ, իր կոչման արժանաւոր գործունէութեամբ մը: Վ. ՇԱՀԷՆԻ

### ՎՐԱՊՈՎԻ

Նախորդ թուի երկրորդ երես, երկրորդ սիւնակ 34րդ տող՝ Օրուան կեանքը յօդուածի մէջ «գրգռիչ» բառը պիտի ըլլայ «գրաւիչ»:



(Կարապետ Մարգարէի կէսնկան) ՆՈՐԱՊՈՎԻ ԱՐժ. ՏԵՐ ՂԵՎՈՆԴ ԱՐԵՂԱՅ ՕՐՄԱՆ ՀԱՆԴԷՍ ՈՒՍՏՐԻ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ (Մեր Յատուկ Թղթակցէն)

Շարաթ երկույ է. ժամը ճիշդ 7.30ին սկսաւ ժամերգութիւնը. նիւնորքէն Արժ. Մաղթոյ վրդ. ներկայ են: Յետ ժամերգութեան Առաջնորդ Մարգարէ կատարեց «Բա՛հանայական Կոչման» խորհուրդը յանձին Մարգարէի կէսնկան Կարապետ Աւագ՝ Սարկաւազի:

Երկուստեք բազմութիւն մը գրաւած է եկեղեցւոյ նստարանները: Պաշտամունքը վերջացաւ ժամ 8.30ին:

ուած է մարդկութեան կամ ողբերու ազնուացումը կամ սլաւոսեումը: Շատ անգամ կրօնքը Ասորիտանը կործանեցաւ, Յունաստանը իր հին փառքով միայն կը պարծենայ. Հռոմէական այն միակեան պետութիւնը իր միծու թեան ու փառքի ստուերն անգամ չէ թողած. Պարսկական, Եգիպտական և Արաբական հզօր ինքնակալութիւնները կամ իսկուռ չքացած են և կամ իրենց այնչափ մէկ հետքը թողած: Այդ անկուսներն ամենը միասին առնելով՝ ուրիշ բանի կարելի չէ վերագրել եթէ ոչ անհատի անկում, անհատի անբարոյականացման ու այլասեռումին, անհատի հողւոյ բարձր շարժումներու գաղափարներն: Այդ երեւոյթը բացատրելու համար ես աւելի որոշ, աւելի գիւրբմբռնելի օրինակ մը չէի կարող բերել՝ քան թուրք պետութեան օրինակը:

Եթէ հիմա թուրքի խորը գտնուէինք, ուր բնակալութեան ծանր կուտփին սակ ընկճուած և տղիտութեան մը շուրջ մը պարտուած Հայը հազիւ ուրեմն կարող է նոյն այդ քաղաքակրթութեան և զարգացման երբեմնակի և վաղանցիկ նշոյլները տեսնել, ինձ համար շատ գեղարար պիտի ըլլար քաղաքակրթութիւնը և յատաճի իմութիւնը, երկուստեք:

Կիրակի առաւօտ ժամ 9ին սկսաւ ժամերգութիւնը և 10ին Ս. Պատարագի խորհուրդը: Ուստի հարկաւոր ժողովուրդը ստիպուած էր եկեղեցիէն դուրս մընալ, տեղի տալու համար հազարի մօտ հիւրերուն, որոնք փութացած էին Ուսարքի շրջաններէն, Պատմունէն, Բրովիտէնէն, Լորէնէն և այլ մերձակայ քաղաքներէն: Երբ Ս. Պատարագի խորհուրդը հասաւ «Ողջոյն տուք միմեանց»ին Պատարագի Սրբազանը սկսաւ օժման խորհուրդին, որ տեւեց մօտ 1 1/2 ժամ: Սրբազան Հայր քարոզ խօսեցաւ նիւթ ունենալով «Իմ կերակուր այն է, զի արարից զկամս այնորիկ, որ առաքեացն զիս»:

Սրբազան Հայր քարոզի ամփոփումն է՝ Այն մարդիկ, որ հոգւով չեն ապրիր, ո՛ր է քան չեն զգար զի Աստուած զարանի կը ներգործէ իւր Հոգւոյն շնորհօք: Եւ Աստուած իւր այդ գաղտնի գործութեամբ է, որ Սողոմոն Պողոսի կը փոխէ: Բրիտանացի շատ նեղութիւն և հալածանք կրեց հասցնելու համար Հրէից ժողովուրդեան թէ՛ Եկեղեցոյ Ս. Սրբազանը գաղտնի գործութեամբ կը ներգործեն: Սողոմոն երբեմն հալածիչ Բրիտանացիներէն ընդունեց իւր ընթացքը երբ ընդունեց երկնային շնորհը: Ըստ Հայաստանեկեղեցոյ Աստուծոյ նուիրեալ պաշտօնեայք բողոքողին կը փոխուին և նոր մարդ կը գտնուին. բայց եթէ կան այնպիսիներ, որք իրենց կոչումէն յետոյ կը մնան իրենց նախնի բնաւորութեան մէջ, զոքս անարժան են այդ Ս. Կոչման: Եւ թէ եւ նոքա իրեն միջնորդ Աստուծոյ և մարդկան ու խորհրդոց կը մօտենան, բայց Աստուած երես կը դարձունէ և շիւրք անոնց, և վա՛յ այն ժողովուրդեան, որ այդպիսի անարժաններու ետև կանգնելով՝ կ'ախտաբան աստուծային օրհնութեան արժանանալ: Վա՛յ այն եկեղեցականին, որ իր հանգստութեան կամ նիւթական շահուն համար կը ներկայացնէ զանձն՝ իբր ընծայացու:

Ժողովուրդը մը երբ մէկը կը ներկայացնէ ի Ս. Կոչումն պարտաւոր է նախ քննել նորա անցեալն ու ներկան: Նայնպէս ձեռնադրոց Եկեղեցոյս պարտաւոր է քննել ընծայեալին բարոյական կեանքն, թէ ի սրտէ՞ կը նուիրուի, եթէ ոչ՝ առ հարկի կամ նիւթական շահուն համար: Եւ, ըստ Սրբազանը, իմ կարողութեան չափով նախանձանդիր եղած և խղճի մտօք քննած եմ ներկայ ընծայացուի անցեալն և ամեն մարդ բարի վկայութիւն տուած է իր մասին: Ուստի ի նկատի ունենալով իմ զբաղեալ վիճակն իբրև ընդհանուր Առաջնորդ, նոյնպէս Ս. Փրկիչ եկեղեցոյ անհոգի և զբաղեալ մնալն երկար տանէ ի վեր՝ յանձնը առի ամեն պատասխանատուութիւն ներկայ ընծայացուի անձին մասին: Ուստի

ազնիւ շարժումներ ձեռք բացարեւել. եւ սակայն բարեբաղդութիւն է որ ինչպէս դուք՝ նոյնպէս և ես քաղաքակիրթ երկրի մը ծոցին մէջ կը գտնուինք. որքան ալ անյարար ըլլայ միջավայրնիս, որքան ալ օտար ցեղերէ շրջապատուած ըլլանք, ըմբռնուին իսկ կարճ ըլլայ, տեղային հանգամանքները մեզ անձանօթ մընան, դարձեալ կրնանք նոյն իսկ ստրկութեան ազդեցութեան տակ ընդարմացած մեր հոգւով հասկնալ այն ամեն առաւելութիւնները, այն ամեն բարձր ու փնտձ գաղտնիքը, որոնցմով քաղաքակիրթեալ ազգերը կը շարժին:

\* \* \*

Շարժումը Հայ ազգին մէջ իր ամբողջ առումներովը:

Այս երրորդ բաժնումին մէջ կուգանք կը հասնինք մեր նիւթի այն մասին, որ ուղղակի մեր գոյութեան հետ կցորդուած է և ուր աւելի կամ նուազ աստիճանով կրնանք շօտափել մեր տկար կողմերը, մեր առաւելութիւններն ու պակասութիւնները, մեր ազգային յատկանշական նկարագիրը և մեր կատարած ու կատարելիք գերը մեր շրջանին մէջ: Երկար պիտի ըլլայ սակայն, եթէ անցեալ պատմութեան խոր էջերուն մէջ մտնենք և նոր ուսումնասիրութիւններ ընենք, միայն եթէ հարկը պահանջէ՝ մեր

տի Ուսարի վիճակի երեսփոխանական ժողովն իւր ամսոյս 1ի ժողովին մէջ միաձայնութեամբ որոշեց զՊ. Կարապետ Մարգարեանին կոչել յաստիճան կուսակցութեան քահանայութեան և կարգել հոգեւոր Հովիւ Ուսարի թեմին: Ես, ըստ Սրբազանը, երբէք չեմ հաւատար, որ ներկայ ընծայացուն նիւթական շահուակնկալութեամբ կը դիմէ այս Ս. Կոչման: Հայ եկեղեցականը կ'ապրի միայն, բայց հարուստ չի լինիր. այն եկեղեցականը միայն գրամ կը շահի, որ փոխանակ պանիր հացով ապրելու, պանիրի գինը կը խնայէ և չոր հացով միայն կ'ապրի: Եւ ժողովուրդը կը սիրէ այն եկեղեցականը, որ անկեղծօրէն նուիրեալ է, և ընդհանրապէս կը շարժարէ այն պաշտօնեայն, որ կեղծ է:

Սոյն նուիրեալն ալ, որ ժողովուրդեան մէջ երկար տանէ գործած է, կը ճանչնայ ժողովուրդը. ուստի կը հաւատամ թէ անկեղծօրէն կը նուիրուի: Բայց պաշտօնեայ մը որքան ալ անկեղծօրէն նուիրուի, ժողովուրդը պարտաւոր է օգնել և քաջաբերկ զանի: Հայ պաշտօնեայք մասնաւորապէս պարտաւորուած չեն իբր վարչական անձինք: Նոյնպէս վարչական մարդիկ չեն պատրաստար Միսիոնարական ուսումնարանները: Ես նորէն պարտաւորութիւն կըզգամ շնորհակալութիւն յայտնել այն օտար հաստատութեանց, որք հայ երիտասարդները կրթելով կը նուիրեն ազգային եկեղեցոյն: Բայց կ'աւտեմ այն հաստատութիւնները, որք իրենց առած կրթութիւնով բաժանում և երկպառակութիւն կը ձգեն ժողովուրդեան մէջ:

Ամեն Հայ պարտաւոր է յարգանք և պատկառանք ունենալ դէպի Մայրենի եկեղեցին, զի նա պահած է ազգութիւնը, և բոլոր ազգեր ու տէրութիւնք զմեզ կը ճանչնան մեր եկեղեցիով, քանի որ ազգային իշխանութիւն չուենք:

Որովհետեւ մեր ազգային և կրօնական հաստատութիւնք բաժնուած են կըրօնական խորութեանց պատճառաւ, աստոր համար է, որ մեր նիւթական և բարոյական ուժերն ալ բաժանուած կը մնան և ազգը տկար, ու այդ է որ կը վնասէ Ազգային Փրկութեան գործին:

Մենք չենք հաւատար, ըստ Սրբազանը, որ կը գտնուին Մարգարեանի ազգականք և բարեկամք, որք կը վշտանան անոր Մայրենի եկեղեցոյ այդուհի մէջ գործելու ուղիուն համար:

Սրբազանը արտաքին մարդից որ բոլոր հետաքննալ և օտարացեալք միանան իրենց Մայրենի եկեղեցոյն:

Օժման խորհուրդը յուզիչ էր, վե՛հ և պատկառելի: Հաջորաւոր ժողովուրդը կարծես ակնապիշ ու զարեւր էր լսելու թէ Սրբազանը պիտի փոխէ՞ր ընծայեալին

անունը, երբ Սրբազանը որտառուչ կրօնական մը սկսաւ «Օրհնեցի՛ր, օծյի՛ր եւ սրբեցի՛ր ճակատ Տ. Ղեւոնդ քահանային»: ամենուի գէմքին վրայ գոհունակ արտայայտութիւն մը կը փայլէր և ամեն համակիր սրտերէ վեր կը բարձրանար սա մաղթանքը. «Աստուած կարողութիւն տայ իրեն և իւր անուանակցի՛ր Ղեւոնդ երէցին պէս անձնուէր հովիւ լինի՛ր»: Յետ աւարտման սրբազան խորհրդոյն՝ նորընծայ կանգնեցաւ բեմին առաջը, և համայն ժողովուրդը դիմեց ի համարս օժեալ աղոյնս:

Ժողովուրդը կրօնական խորին միութարութեամբ լի մեկնեցաւ եկեղեցիէն, երկրյան նորէն եկեղեցի գալ և վեղարի օրհնութեան խորհրդոյն ներկայ գլուխու փոփոխեալն:

Երեկոյն ժամը ճին ժամերգութիւնը սկսաւ, եւ ժամերգութեան վերջ Սըրբազանը կատարեց վեղարի օրհնութիւնը. եւ իւր խօսքն ուղղելով նորընծային՝ նախորձ բայց ազգու խրատական մը խօսեցաւ անոր, եւ քանիցս ըսաւ չեղտելով թէ՛ ինքն կոչեց զՄարգարեանին յաստիճան կուսակցութեան համար, այնու հաւատով եւ վստահութեամբ թէ իւր առաջին ձեռնադրուած հոգեւոր գաւազանը ամօթով չի պիտի շնորհիլն ազգային մէջ:

Կ'արժէ հոս աւելցնել թէ՛ Արժ. Հայր Ղեւոնդ Մարգարեանի անցեալ ուրբաթ օր պաշտօնական նամակ մը ստացաւ Նիւ Եորքի Բողոքական Միսիոնարական պաշտօնատեսէն, որոնք կը խնայէին թէ Տեղական թեմերէ լուծուած են որ ինքն Մարգարեանին, թողով Բողոքականութիւնը՝ ընդունած է Հռոմը. կաթոլիկութիւնը, եւ այդպէս իւր այս ընթացքը ընդհանուր ուղարկութիւն գրուած է Բողոքական շրջանակներու մէջ, կը խնդրեն թայտարել թէ ի՞նչ պատճառներէ զրդեալ է:

Նորին Արժ. պատասխանելով այդ պաշտօնագրոյն, ըսած է թէ՛ «Իմ Հայրն ու մայրը Հայաստանեայց եկեղեցոյ գաւազան եղած են. ես իմ ազգայնական Բողոքական վարժարաններու մէջ ուսում առած լինելով, երբ անոնց կողմէն առաջարկուեցաւ ինձ քարոզել իմ ազգայնաց մէջ, սիրով յանձն առի, եւ կը քարոզէի. սակայն ես ինքն սիրով լինելով իմ Մայրենի եկեղեցոյն, երբ նորա Հոգեւոր իշխանութիւնը հրահար կարգաց ինձ գալ եւ իմ մայրենի եկեղեցոյ այդքին մէջ գործել, սիրով յանձն առի: Ես ես ո՛չ թէ Հռոմը. կաթոլիկութիւնը ընդունած եմ, այլ ուղղակի իմ Մայրենի եկեղեցոյն զիրիւր դարձած»:

ՄԱԺԿՈՒՆԻ

Հակասող ձգտումները, որոնք շատ անգամ աղէտաբեր հետևանքներ ունեցած են մեր ազգի ճակատագրին վրայ, Հոգւոյ ձգտումներու այլապաշարութեան մեր մէջ առաջացած է այն ժառանգական և պատմական անհամաձայնութիւնը, որ եթէ ոչ զլիովին՝ գէ՛ղ մեծած մասամբ մեր գերի ու ստրուկ ազգ մը ըլլալու պատճառներէն մին եղած է:

Մինչև այս դարու սկիզբները Հայ ազգը չունէր այն առանձնաշնորհումներ, որոց թէև սեղմ, սակայն քիչ շատ շարժելու արագեղ ներկայացնող միջավայրին մէջ կարողանար իր առանձնաշնորհութիւնները ցոյց տալ: Ամեն մէկ ազգնիւ ձգտում Հինգ Հարիւր տարուան գերութեան շրջանով պրկուած ժողովուրդի մը մէջ մեծած չէք, այլ թմրած, որոնք պատեհ առթի կըսպասէին արթնանալու: Այս երկոյթը ցոյց կուտայ Հայ ժողովուրդի նկարագրի մէկ զօրեղ մասը, իր շրջանին համակերպիլ գիտնալով միասին իր զուտ ազգայնական ոգիի թէպէտ արթնումը. յատկութիւն մը որ թէպէտ և գերի եղող ժողովուրդի մը մէջ միշտ երկցած է, բայց մեր ազգին մէջ այդ բանը կը փայլի աւելի յայտնի ու որոշ կերպով:

Հաթթը-Հիւմախէն և Պրիմի պատերազմէն վերջ երբ Թուրքական գերիշխանութեան տակ գտնուող քրիստոնեայ ազգաբնակչութիւններուն արտօնութիւններու նման բաներ մը կը ստուէր,

ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՆԻԿ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԻՐԱՏԷ

Կ. Պօլիս, Հոկտ. 12

Կայսերական իրաւէ մը հրատարակուեցաւ, որ Հայերուն ազատ երթևեկութիւնը արգելող բոլոր միջոցները կը ջնջէ: Անով կը հրամայուի կառավարական ձեռնառութեամբ վերաշինել կամ նորոգել բոլոր վանքերը, եկեղեցիները եւ դպրոցները, որոնք աղէտներուն ժամանակը կորուսած են: Նաև պէտք է դրամական վճարում ըլլայ ընտանեացը այն պաշտօնեայներուն, որոնք վարդերու ժամանակ սպաննուած են կամ երկրէն արտաքսուած:

Իրաւէով ներում կը շնորհուի 54 բանտարկեալներու և 24 մահապարտներու գատաւճիւղը ցմահ բանտարկութեան կը փոխուի: Իրովհետեւ Օսմ. կառավարութեան կողմէն եղած այս արարքը զոհացում պատճառներ է Պատրիարքին, ուստի սըրուած հրատարականք ես պիտի տանուի:

ՎԱՆ

Տօք. Բէյնալըզ վանկն կը գրէ թէ տեղը նոր եկած ներուս Եպիսկոպոսը իրեն զրմած և իրմէ բժիշկ մը խնդրած է, որովհետեւ տանէ մը ի վեր է որ հոյսեր 1000 լիւրայի շափ գումար մ'ունին հիւանդանոցի մը համար. բայց չէնք կառուցանել առաջ՝ ուղիցին գիտնալ թէ արդեօք յարմար բժիշկ մը կրնա՞ն զբուսնել, որ հիւանդանոցը կարենան անոր յանձնել. նոքա շատ սուբստիտուտ կը փոփոքին որ այդ գործը զենն մեր միտնարկան բժշկին հոգածութեան տակ: Կ'իմանանք թէ արդէն այդ նպատակին համար Ամերիկայի Պօրտը բժիշկ մը զրկուել վրայ է:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Մակարայեցոյ վանքին սեփականութեան խնդիրը առկալն նոյն վիճակին մէջ կը մնայ. ստորինները պիտի թէ իրենցն է՝ կ'արտաքսուի իրենց արդան ունենալու տեսչային իշխանութեանց կարծիքը, մինչ Կ. Պօլսյ մէջ Պատրիարքարան իր ձեռք սեփականութեան ամենէն զօրուոր փաստերն ունի՝ ահրութեան ներկայացնելու: Տիգրանակերտի առաջնորդական տեղապահ, վերջին տեղեկութեանց նայելով, կեզրունէն սրուելիք հրահանին կըսպասէ: Յայտնի է թէ վանքը այժմ ոչ Հայոց և ոչ ալ Ասորոց ձեռքըն է, այլ կըսպասուի զննութեանց կըլքին:

ԽԱՐԲԵՐԴ

Խարբերդի մէջ 1000էն աւելի որբերուն հոգը զլիսուորաբար ծանրացած է

Հայը սկսաւ այդ ժամանակէն իր միջավայրին մէջ իւրաւունքներ, վերականգնութեան նշաններ ցոյց տալ և երբ Արևմտեան քաղաքակրթութեան երբեմնի ճառագայթները սկսան ստիական խաւար միջնորդին մէջ թափանցել, լուսաւորութեան և զարթոնալու միակ ընդունակ՝ Հայը գտան: Ահա՛ այդ ժամանակէն Հայրութեան հոգին ցնցուեցաւ, շարժեցաւ և իր բարձր ներշնչումներուն դոհացում տալու փոփոքը զգաց, իր բարոյական ծարաւի պապակը մարելու տենջն ունեցաւ: Անոր որդիքը սկսան քաղաքակրթութեան օրրանները վազել իրենց մտքը քաղցր յազուրդ տալու համար Այդ ալ բաւական չէր: Անձնատէր պիտի համարուէին անոնք, եթէ լուսաւորեալ ազգերէ քաղած իրենց բարիքները միայն իրենց անձին սեփականացնէին. և իրենց ամեն կարգի շարժումներէն ու վարձուքէն կը տեսնենք թէ այդ մարդիկը իրենց ազգին, Հայ հանրութեան թաքուն առաքինութիւններուն ծնօթի և իրենց գիտակցութեամբ ու ընդունակութեամբ համեմատօրէն աւելի բարձր և աւելի դիւրին ըմբռնող, անոնք կ'ուզէին նայն այդ թաքուն առաքինութիւնները երևան հանել, բողոքողները, ծրեցնել ու ծաղկեցնել. ահա այդ բարձր ու փնտձ նպատակի մէջ իրենց արդի գոհացումը կը փնտռէին և գտնել կ'երազէին: (Շարունակելի) Ս. ՍՈՒՐԻՆ

Պատ. և տիկին Պարսեմի վրայ, որոնք չափէն աւելի յաջած ըլլալով՝ հանգրտան կը կարօտին: Միտնարական այդ կայանը հրաւիրած է Արթ. Պատ. ճօրճ կարգը որբերուն գործը ստանձնելու, որ Ազգ. Հայկական նպատամատոյց Ընկերութեան քարտուղարն էր, այժմ Պարբերք երթալու նպատակով այդ պաշտօնէն հրաժարած է, որուն տեղը պիտի աճցնի Օրիորդ Էմիլի Հաւիլը:

ՈՒՐՅԱՆ

Միս Մարշալ Սկովտայի բարեկիրտ օրիորդը, որ հայկական ջարդերու ատեն կրկնակի գնաց անգլիական նպատակները բաշխելու, Աւրֆաէն սկովտական հանգրտանի մը կը գրէ թէ՛ ինչպէս շքեղ կին գաստատուներ՝ տունները շրջելով կանանց դաս կուտան, թէ վերջին երկու տարիներուն մէջ 1000էն աւելի կիներ կարգաւ սորվեր են, թէ մտաւոր կարեւոր գարգացում մը յաւանդ կերպով հայոց մէջ. և կը յայտնուի. «Տուն մը արկնով մը այցելութեան գնացի և տեսայ որ խեղճը այրած սրտով մը կուշար: Ես իմացեր էր թէ իր դեռատի դուստրը, որ ջարդերու ժամանակ կորսուած էր, տեսնուեր է բաղնիքին մէջ. ատկէ կը գիտցուի որ նա փակուած է թրքական հարէ մի մը մէջ: Ինչ՞ը ողբացող մայր, ինչպէ՞ս մենք բառ կրնանք գտնել քեզ միտքորբուր. մահը նարեւնարելի էր՝ ասոր բարեգտակով»:

ՄԱՐՍԸ

Օրիորդ Սինէս Սամբոն Մարաշէն իր վերջի մէկ շրջաբերական նամակին մէջ Հայ որբերու մասին հետեւեալը կը գրէ: Գարնան արձակուրդը սկսաւ: Յարգանքը տանկերկու տարեկան և վերջը աղքատները վար զնել և անոնց փութի վարձ մը վճարելով ո՛ր է արհեստ մը սորվեցնել, որ սպազային իր գիւղական կեանքին մէջ իրեն պիտի օգնէ, ուր պիտի դառնայ:

Հիմակ ունինք 26 կողակար, 20 ուսայնակ, 16 գերակ, 3 ստիբլի, 2 վերանապարտ, 2 պարտիզպան, 5 հրան, 6 թիթիկապարտ, 2 արհարար, 3 հայազոր, 4 բրտա, 2 ձալի: Այլ կիներն ևս ընտանեկան գործերով զբաղած են:

ՄԵԶՐԻԻ ԱԶԳ. ԵՐԿՈՒՅՈՒ ԳՕԼԵԾԸ

Սրտի բերկրանօք կուգանք Ամերիկայի տարբայ ազգակիցներու ներկայացուցիչ Մեզրի ազգային երկուս զօլէճը, ուր այժմ 500ի շարք ուսանողներ կան, որոնց մեծ մասը գիւղերէն հաւաքուած են, բաւական նկատելի թիւ մ'ալ ձրկավարներ են նրեթական միջոցէ գուրկ ըլլանուն պատճառաւ:

Գօլէճը իր գանազան ճիւղերուն մէջ ունի 18 բարձր կարգի ուսուցիչներ, որոնցմէ ոմանք եմբրտա Գօլէճի նախկին ուսուցիչներն են:

Ինչպէս կարին իր Սանասարեան գրգրացով, այժմ ալ Պարբերք իր կեդրոնական երկուս զօլէճով կը պարծի:

Գարնան տարեկան ծախքը 400 լիբրայի շարք է: Ենթադրելով որ Մէզրիի տեղական ժողովուրդը բաւական չէր այդ ահաբան նրեթական բեռը տանիլ, Գօլէճի խնամակալութիւնը և Օթմանդակ Մանասխուրը հրաւէր կարգացին Ամերիկայի մէջ գտնուող Մեզրիցի երիտասարդներուն, որոնք բրտալուսնէն ու Պոստօնէն ի մի գալով՝ միտքիւն մը կազմեցին, նպատակ ունենալով՝ կանոնաւորապէս օգնել Գօլէճին և թէ Պարբերքի ազգային Որբանոցին:

Գանի որ այս ազգային լուսաւորութեան կարեւոր վտարանը կը պատկանի ամբողջ Հայութեան ընդհանրապէս և և խորքերը ցնցուած մասնաւորապէս, իրաւունք ունինք ակնկալել, որ բոլոր լուսաւորութեան նախանձախնդիր եղող հայրենակիցներն անդամակցելով նորահաստա Միտքիւն կամ նուիրատուութեամբ ոյժ տան մեզ:

Անոնք որ իրենց զաւակները յիշեալ Գօլէճը զլ. կած են կամ զրկելու մտադրութիւն ունին, կրնան գիտնել Գործադիր ժողովի՝ ստորե գրուած հասցէին, և մենք կը խոստանանք ամեն հարկ եղածը տնօրինել ըստ պարտ ու պատշաճի:

և փութով, և աւելի շիւրջութիւն մը պիտի ունենան եթէ ծախուց հարկաւոր դրամը հոս վճարեն Միտքիւնս: (\*)

Գործադիր Ժողովի անդամներն են. Պրն. Կարապետ Մեքրապեան Ատենապետ » Ասատուր Այվազեան Փ. Ատենապետ » Երեմիա Յարբեան Ատենապետ » Պ. Թ. Յարբեան Գանձապետ » Եղիա Թ. » Պարբերակ » Յովսէփ Նաճարեան » Արտաշէս Նորայեան Հաւաքիչ Ի Դիմաց Մեզրիցի կեդր. Երկուս Գօլէճի և Ազգ. Որբանոցի նպատող Միտքիւնս:

Ատենապետ Ատենապետ Ե. ՅԱՆՈՒՅԻԱՆ Կ. ՄԵՍՐՈՊԵԱՆ, Հասցէ՝ Mr. Garabed Mesrobian 70 North Main St., Prov. R. I.

(\*) Կը շնորհաւորենք այս նորահաստա Միտքիւնը և կը մտղթենք որ իր յարատուութեամբ օգտակար ըլլայ: Ամեն իրիպի մէջ հետեւեալ ծրուած օր ծախող ազգուրու միտքիւններու ձեռնարկներ միտքիւններուն իրենց թիւն են և Ամերիկայի հայ գաղութը նշանակելի տպագրող մը կը խոստանայ: ՄՄԲ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ (\*)

Յունիս 1ին Կ. Պօլսէն հոս հասան ներսն եպիսկոպոս և վարդապետ մը: Ես հրաւիրուած էի Կարմրաւոր վանքի Որբանոցի առաջին տարեկարձի հանգրտան ներկայ ըլլալու, ուր պատահութիւն ունեցայ ծառայութեամբ յիշեալներուն հետ: Անոնք զրկուած են կաթոլիկ շարժման աղքատներու և անոնց դէմ ազատ համարձակ քարոզելու: Անոնք զխոտութիւններէն ոմանք թերևս կրնան վերադրել մեզի ու: ասկան յայտնի է որ ամեն կերպով կը ջանան մեզ հետ բարեկամութիւն պահելու: Անոնք ուրբա՞ր որ անոնք մեզի այցելեցին, և քանի մը ժամ վատնեցին այցելելու գարնանը և որբանոցը, և խորին զգացմամբ գոհունակութիւն յայտնեցին, ազայոց եղած բոլոր բաներուն համար: Դիտարութիւն ըրին թէ՛ եթէ ամեն տեղի ամերիկեան որբանոցները այսպէս ըլլան՝ ըսելիք չունին: Սակայն իրենք արտուր բանի լսած են ուրիշներուն վրայով: Ես կը հաւատամ թէ հակառակորդներ երբեմն թըշնամարար սխալ տեղեկութիւններ կուտան:

Բացի Տօն օրերէ և շաբաթ մի անգամէ, աղայքը մայրենի եկեղեցին չենք զրկեր: Միայն վերջերս սկսած ենք անոնց եկեղեցական պատմութեան և վարդապետութեանք դասեր տալ: Անոնք որ և է վանք ըլլալով գանձեց իրենց մայրենի եկեղեցին օտարացուելու, լայց շատ խնամ կը տարուի գանձեց ճշմարիտ Բրիտանիսթեան մէջ հաստատելու: Մանչերէն շատերը այժմ պատրաստ են իրր վարդապետ ընթացաւարտները իրենց ժողովուրդին ուսուցչութեան երթալու, և եթէ անոնք կրնան երթալ իր անդամ իրենց մայրենի եկեղեցոյն, և իրենց ազգայիններու սրտին մէջ մուտք գտնեն, ազատ ըլլան մտքի կաշկանդումէ, և այս ամենը ըլլան բողոքական անունին անընդատութեանն զերծ, այն ատեն մենք իրապէս կրնանք մեր Տիրոջը թագաւորութիւնը տարածել մեծագոյն արգիւններով, քան որ գանձեց իր բողոքական զրկենք:

Թէ արդե՞ք ժամանակը հասն է որ մեր ջանքերը պատկուին. փորձառութիւնը պիտի ցուցնէ: Ես իմաստութիւն կը համարիմ այս ուղղութեամբ ամեն ճիշտութիւն և ողջամիտ փութ մը կատարել. եթէ յաջողի, ասով մենք մեր նպատակին կը հասնինք, որ է՝ Լուսաւորել Հայաստանեայց եկեղեցին: Իսկ եթէ չյաջողի, անկէ զալիք ու է Գնաս մը չեմ տեսներ, կրնանք անկէ քաղուած

(\*) Վանէն գրուած այն կարեւոր նամակը Միտքիւնի 25րդ ամիսին թարգմանելով կը հրատարակենք:

փորձառութիւնները ուրիշ ուղղութիւնով գործածել, եթէ հարկ ըլլայ կրկին հին մեթոտին դառնալու:

S. Թ. ԲԵՆՕԼՏՍՍ

ՆԱՄԱԿ ՊՈՒՆՆԱՐԻԱՆ

Ֆրիլայէ, 99 Սեպտ. 20 Վաշինգթոն «Շարժում» թերթին մէջ Ամերիկայէն գրուած թղթակցութիւնները կը կարգանք, զրպարտութիւններով ու հայհոյութիւններով լի ստոնց ոչ դուք կը հաւատաք ոչ ալ մենք պիտի հաւատանք: Դուք՝ որովհետեւ տեղադր մէն մի ինդրին մօտէն ծանօթ էք ու զրպարտութիւններ ըլլալը կը հասկնաք. մենք՝ որովհետեւ այդ թերթի ու իր արփանեակ կուսակցութիւններու երևան գալէն իմեր դասն փորձեր կրած ենք:

Երկու երեք տարի է որ Պուլկարայի հայը իր անդորրութիւնը կորսնցուցած է անոնց երեսէն: Զրպարտութիւն, հայհոյանք, վէճ, կռիւ, քատակարութիւն, և վերջին տաւա՛ Ֆրիլայէի եկեղեցոյ դրան եղբայրասպան ու արեւանակ կուր: Եւ մեր այս գեղադր խառնակ վիճակը վերջ չունի:

Եւ այսպիսիները ինքզինքնին ազգին նուիրած յեղափոխականներ կը համարեն, ու իրենց գործը ազգին խառնութեանը մէջ կը փնտռեն: Ով որ իրենց կուսակցութեան չի պատկանիր, իրենցմէ չէ, այլ նա մասնիչ, դաւաճան, ազգակործան ու ամենայն ինչ է: Նախ անհատները կը վերցնեն, անհատները կը զերպարտեն, կը հայածեն, որպէս իր ընկերութիւնները խորտակեն:

Նայն ֆրազներու, նոյն զրպարտութիւններու կրկնութիւնն է, որ այդտեղ կը գործեն մասնաւոր գործիչ անհատները վարկարկ ընելու, ինչ որ հոս գործածուեցին ու կը գործածեն:

Իսկ, իրենց հանրային կեանքի այս պատկերին յետոյ, ներքին կեանքներին ապականութեան մէջ թաղուած է: Հոս իրենց ներկայացուցիչ համարուած հայգուր կոտորակից աչաք քաղաքները կը շրջէ. ամեն տեղ ցոյցանելով իր անբարոյական տրպարը: Ազգային զգացումէ գուրկ, բերանն աղտոտ հայհոյութիւններով լեցուն, և հայտնի օղիի օգելից ամպերուն մէջէն կը տեսնէ՛ «Կեցցէ՛ Հայաստան. կեցցէ՛...» պօսալով: Ալ թող հասարակութիւնը դատէ, այսպիսին յեղափոխական մըն է, թէ սրիկայ մը, ազնիւ հայրենասէր մը թէ անբարոյական մը:

Բայց կրնա՞ք քննադատել, կրնա՞ք խօսք մ'անգամ ըսել իրենց օրկան «Շարժում»ը հոս է, պատրաստ իր սիւնակներով մրտաբեր, մեր քսեռու ամեն մի արնուութեան: Կրնա՞ք քննադատել դաշնակցական, Բարիկի ինքնակոչ աղնուական Պոստն ար Բալֆայրանը, որը Պօլսայ մէջ հայկական թատրոնի մը տնօրէն է եղեր (?!): Իմայ անոր որ կը քննադատէ այդ խաչագողը, մէյ մ'ալ Ռիւ Մօնթէն ըմբի՛ր մը կուտի սուպարէզ պիտի հրաւիրէ... Վանդարները վայ՛ յարթուողին կընէին, հիմա ասոնք վայ՛ մեղքը նախաժողովն, կըսեն:

Ասոնց շահատակութեանք տրդիւնք եղող դատաւարութիւնները դեռ կը շարունակուին հոս և այս օրերը պիտի վերջանայ. արդիւնքը կը հաղորդեմ ձեզ:

Ամերիկայի ազնիւ հայրենակիցներուն մի խօսք միայն ունիմ ըսելիք: Հոս մենք շատ խռովեցանք, շատ աստանեցանք, զգուշացէ՛ք, զրպարտիչ թերթը ասկէ հոս ալ սկսած է իր թոյները զրկել, եթէ հոգ նմոյշը չունէք, եղբայրական կուրները ազգակործան են: Ամերիկայի հայ դաղութիւն, ցայսօր իւր ազգասիրութեամբ ու միտքիւնով օրինակելի եղած է մեզ համար: Ներքին կուրները հոս գոյութիւն չունին. պահեցէ՛ք ձեր այդ անաղարտ պատիւը...:

ԿՈՐԻԻՆ

ՆԱՄԱԿ ՊՈՍՏՈՆԷՆ

9, Հոկտ.

Գեղեցիկ հանդիսի մը հաճոյալի աւարտութեամբ տակ՝ կը փութամ գրել այս սուղերը:

Պոստօնի Հայուհայն նորակազմ ըն-

կերութիւնը տօնեց իւր հիմնարկութիւնը երէկ իրիկուն, անդրանիկ հանգիստով մը: Ճոխ ծրագրի մը ազգում հրապարտու Տիկնանց Ընկերութիւնը քաղաքի բնակիչ նպատակը խթան մ'ըլլալով Պոստօնի ու շրջակայքի երկուս ազգայնոց՝ խուռն բազմութեամբ փութացած էին ներկայ գտնուել հանդիսին:

Արաստանութեան, երգերու և նուագածութեան մէջ իրենց շնորհալի բաժինը ունեցան Տիկնայք Վ. Թօմսըն, Փաշահան, Սրապեան և օրիորդ Գիւրգենեան: Հանգրիսին յատուկ փայլ մը ու հանդիսականաց խանդավառութեան առիթ տուին խուռ մը մատաղատի աղջիկներ՝ որոնք Օր. Միտասեանի առաջնորդութեամբ երգեցին «Մշակի երգը»՝ ձեռքի շարժումներով ցոյց տալով մշակի այլապատեման զանազան պարագաները, և ի վերջոյ մը շահին իւր աշխատութիւններէն դադրած հանգիստ ընելուն իրր նմանողութիւն՝ ամենը միասին գեանիք պատկերով:

Օրուան պատուակալ ատենախօսն էր Հայութեան քաղաքանօթ հայասէր ամերիկուհին Օրիորդ Ալիս Սթիւն Պլաքուէլ, որու ատենախօսութեան հայերէն թարգմանութիւնը կարդացուեցաւ ըստ իւր բազմաճառ: Յիշատակութեան արժանի է նաև Տիկին Փաշայեանի ճառատուութիւնը, որ մանկատանութիւնն ու մանկանց կրթութեան վերաբերեալ շատ կարեւոր գիտելիքներ կը պարունակէր ուղեալ տաճնողս:

Ատենապետուհին՝ Տիկին Թօմսըն, կարգաց ընկերակցութեան ուղղութիւնը ծանուցանող տեղեկագիր մը, և շնորհակալութիւն յայտնեց թէ հանգրտանաց և թէ Օր. Պլաքուէլի ներկայութեան համար, մանաւանդ այն քաղաքակալ խօսքերուն համար, զորս օրիորդը արտասանեց Տիկնանց ընկերութեան հիմնարկութեան առիթով:

Հայուհայն Ընկերութիւնը այժմ ունի 28 ներքին անդամուհիներ: Իւր զըլխաւոր նպատակն է Պոստօնի ու շրջակայքի հայ կիները իրարու հետ ծանօթացնել և ընկ. յարաբերութեան մէջ դնել, անոնց մէջ կրթութեան մտցնել և տանտիկնութիւնը զարգացունել իւր բոլոր կարեւոր պայմաններով: Նաև ըստ կարի օգնել հոս կամ հայրենիքին մէջ գտնուող կարօտ ընտանիքներու: Իրենց միջոցներուն ներսին չափովը: Ու վերջապէս ինչ որ ամենէն դժուարը՝ լայց գովելին է, հոգ տանել որ հոս ծնող հայ մանուկներ չմտնան իրենց մայրենի լեզուն:

Ահա այսպիսի պատուական ստաղադրութիւններով կազմուած է Պոստօնի Հայուհայն Ընկերութիւնը, որ իւր բազմաճանքներուն աստիճանարար հասնելու հաւատքով առ այժմ որոշած է ամիսը մի անգամ տիկնանց համար լսարան բանալ և կարող խօսողներու օգտակար տեսութիւններէն ստաղնորդուիլ:

Ձերմտաքին համակրութեան և սրտագին շնորհաւորութեան արժանի է Հայ Տիկնանց այս պատուաբեր ձեռնարկը: Ա. Ա.

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԳ

Հ. Ե. Թանգարանի Միտքիւն 10րդ շրջանի անդամակցութիւնը բացուած է: Ուրախ ենք յայտարարելու որ սոյն Գրադարանը վերջերս շափազանց ճոխացած է, թէ այլ և ալ օգտակար գրքերով եւ թէ բազմաթիւ թերթերով:

Ամեն ճաշակի յարմար ընթերցանութեան գրքեր և թերթեր միշտ տրամադրելի են:

Ձէլ՞ք փափաքէր տարեկան միայն մէկ տարար վճարելով անդամակցիլ սոյն բազմօգուտ կազմակերպութեան և ամբողջ տարի մը ձեր միտքը ընդմտաւորելու հաճոյքը վայելել:

Թանգարանը բաց է ամեն Գշ. Եշ. Ծբ. գիշերները ժամը 8—10, իսկ կիրակիները 1—5:

Շնորհիւ սոյն բարեկարգութեան եւ կարգուսարքին, որ մուտ գտան վերջերս թանգարանին մէջ, ընթերցողներու թիւը հետզհետէ կը բաւարարուի:

Աստ ընթերցողներու թիւը նրեթ, յարմար ժամադրովայր, ծայրայեղ կարգապահութիւն:

Այցելեցէ՛ք անգամ մը և համոզուեցէ՛ք: Այցելեցէ՛ք անգամ մը և համոզուեցէ՛ք: 145 Ե. 23րդ փողոց: ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ Եորքի Հայուհեաց Որբանոցում Ընկերութեան առաջին ընդհանուր ժողով պիտի գումարի յառաջիկայ Չորեքշաբթի 25 Հոկտ. ժամը ճիշդ շին Ս. Ոսկերեան եկեղեցոյ ժողովարանին մէջ:

Նիւ Եորքի և մտակայ քաղաքներու մէջ գտնուող բոլոր Հայ Տիկնայք և Օրբորդք պիտի կր հրաւիրուին ներկայ գտնուիլ և քաղաքները սոյն կարևոր ժողով:

Ի Դիմաց Գործարդի Ժողովոյ Աստուածատուր Աստուածատուր Ե. ՀիւրՄիտի Ա. ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

Այն Հայերը որ քաղաքացի են և կուզեն քուէարկել յառաջիկայ ընտրութեանց մէջ, պարտին ՐիձԵՍԹԸՐ ԸԼԼԱԷ, արձանագրուիլ. արձանագրութիւնները տեղի կուենան այս ուրբաթ և շաբաթ օրերը: Անոնք որ ամեն ասորի բեճնաթիւր չեն ըլլար, չեն կրնար քուէարկել:

Օֆիսները մինչև երեկոյեան ժամը 10 բաց են:

Շիֆուօն մեր թղթակիցը մանրամասն կերպով կը նկարագրէ տեղւոյն Աւստրալիական ակումբի ժողովը, ուր աստեղաբանութեան և Բրոքսի Թատրոնի և Տ. Ա. Աստիկան:

Կը հաղորդէ նոյնպէս թէ Շիֆուօնի Հոգի ընտրուած է արժ. Արքեպիսկոպոս Գ. Զ. Երեմի, որն այժմ Սուշալով կը գտնուի:

Յիջողութիւն «Սարգ» ցաւօք կը գրէ թէ՛ տեղւոյն մէջ Հայեր անձնատուր կըլլան յաղաժողութեան և գիտնաբանութեան գիշերներն թրքական անձոնի խոսքի կանչելով կը ծանօտացունեն զբացիներն. անանկ որ տեղացիներն սկսած են զլուսնանքով նայիլ Հայերուն վրայ:

Այդ ողորմելիներն չեն փախաբիր արդեօք մարդավարի և ազնիւ կեանք մը ունենալ:

ՆՈՅՆ ՏԵՂԵՆ մեր թղթակից Գորբէն կը գրէ՝ «Անցեալ կիրակի տեղիս Հնչ. Մասնաճիւղը հրապարակային ժողով մը ունեցաւ, ուր հրաւիրուած էին խօսելու Տ. Պ. Փափազեան, պատ. Յովսէփեան և Պ. Ս. Մալմէսեան»:

Գաղութի մեծամասնութիւնը ներկայ է գտնուելու և շատ գոհ մնացելու Տիկնայ Մաքրուհի Թաշճեան շատ ներդաշնակ կերպով երգեր է «Սասուն», «Իմ Հայրենիք» և «Ով Միժեռակ» երգերն:

ԻՍԹ ԲԵՅՊԻՐԻՃԵՆ Պր. Բալուցեան կը գրէ թէ՛ 4 երեքն զի «Գարոցասիրոց Ընկերութեան» ծրագր տարեշրջանի ժողովը տեղի ունեցել է հոն, ուր Պր. Մարտիրոս Յովհաննէսեան ատենախօսելով ըսած է թէ՛ երբ փերթընները Անգլիայէն հոս կը գաղթէին, անոնք իրենց առաջին գործը կընէին դպրոց մը հաստատել. այս հզօր հաստատակապետութեան յաջողութեան գաղտնիքը ատոր մէջն էր. ուստի անոնց օրինակին հետեւինք:

Այդ ընկերութիւնը իր հաստատուելէն ի վեր փերթըններ մէջ հաստատ դըպրոց մը պահած է, ուր չքաւորներ ճրի դաստիարակուելու են. այդու հանգրծած այժմ 700 տղարի դրամագլուխ մը ունին:

Կը գովենք Ընկերութեան ջանքն ու եռանդը,

ՍԷՅԼԸՄԵՆ Պ. Յ. Ն. կը գրէ՝ «Տեղւոյ Որբանոցում Ընկերութիւնը Սեպտ. 24ին ժողով մը ունեցաւ և ի նպատակ որբոց գոյացած 10 անգլիական ոսկին որբուհեցաւ Պատրիարքարան զրկել: Գնահատուի են անոնք որոնք այս բարենպաստակ գործը ձեռնարկեցին և կարճ միջոցի մէջ կրցան արդիւնք մը ցոյց տալ. յարատեւութիւն կը մաղթեմ»:

Ամերիկայի Հայ Հրատարակչական Ընկերութեան հետ յարաբերելու ուղղութեամբ կամ անդամակցելու ցանկացողները դիմելու են վարչութեան Աստուածատուին, հետեւեալ Հասցէով:

Armenian Publishing Co. 1035 P. O. Box Providence R. I.

ՔԱՂԱՔԱԿԱՅ

ՌՈՒՍՈՒԱ

Ռուսոյ Չարին ուղեղին վրայ վերաբառեալ քործողութիւն պիտի կատարուի, այն գլխացաւին պատճառաւ, որ հետեանք է ձաբոնի մէջ իր վրայ եղած յարձակումին:

ՅՐԱՆՍՍԱ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Յրանսար դահլիճին Եւեմուական մասնախումբը վատիկանի մէջ Ֆրանսական դեսպանին թշուարիկ համար դրամի վարկ չէ քուէարկել, հետեւաբար Յրանսա Պապին քով դեսպան չկրնար ունենալ:

Ոչ ոք կրնայ բակ թէ թրանսվալի և Անգլիոյ մէջ պատերազմ պիտի ըլլայ կամ ոչ: Լուր կայ թէ թրանսվալի սահմանազիւրի վրայէն Պօլսկոյնը ևս իրենց տեղերը կը դառնան. այս նշան կը համարուի թէ թրանսվալ կը պատրաստուի Անգլիոյ առջև տեղի տալ:

Անգլիա ալ մէկ կողմէն խնդրին մէջէն խաղաղութեամբ ելլելու դուռ մը կը փնտռէ ու միւս կողմէն իր Ափրիկէի հրամանատարին տակ այնպիսի վիթխարի բանակ մը կը դնէ, որուն կէսն չուներ վեկտրիկըն երբ նախօրէին յաղթեց:

Պաղատութեան վեհաժողովի Ծուրը

Արտաքին Գործոց պաշտօնեայէ մը հիմնարկի Պերլինի մէջ շրջապատ մէջ զորաւոր տեղի մը կայ որպէս զի խաղաղութեան վեհաժողովին մասնակցող պետութիւններու զխաւոր ներկայացուցիչներէն անոնք որ մտադիր են ստորագրել ժողովին մէջ կայացած համաձայնութիւնները, փութան Հայաստանի մայրաքաղաքը և իրենց ձեռնարկ ստորագրութիւնները դնեն:

Իտալիա և Աւստրիա արդէն ստորագրած են և անոնց փութով պիտի հետևին Գերմանիա: Միացեալ Նահանգացի դեսպանը Հոուայթ կըսէ թէ՛ ինք դեռ իր կառավարութեանէն այդ մասին հրահանգ մը ստացած չէ:

Լուր կայ թէ Սուլթանը իր հարէ մէջ շատեր ծովին յատակը նետեր է այն կասկածով թէ անոնք կապ ունին Երիտասարդ թիւրքերուն հետ: Դուռը կը հերքէ այդ լուրը. ուստի ալ ո՛վ Դրան հերքումին արժէք չտար:

Մ. Նահանգացի նախկին նախագահ Մր. Հէրիսըն Գերմանիոյ կայսեր հետ խիստ հաճելի տեսակցութիւն մը ունեցել է անոր վրայ շատ գովելով գաղափարներ կազմած է. կը կարծուի որ այս բանը բաւական ազդեցութիւն մը ունենայ Մ. Նահանգացի մէջ Գերմանիոյ հակակիր եղող զգացումները լուսացունելու:

ՀՈԳԵԶԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՈՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՀԱՄԱՐ

Վերջին ահաբեկի կատարածներու միջոցին Սուլթանական վարչութեանց գոհ գացող բիւրաւոր Հայ նահատակաց յիշատակը տօնելու, և այդ յիշատակաւ ճշմարիտ Հայ սրտերու մէջ կրօնի և Ազգութեան սիրոյ բոցը արծարծելու համար յառաջիկայ կիրակի (22 Հոկտ.) յատկապէս Ս. Պատարագ պիտի մատուցուի և Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարուի Ս. Ոսկերեան եկեղեցոյ մէջ ի յիշատակ ընդհանուր Հայ նահատակաց հոգոյն:

Ամեն ազգասէր Հայ կը հրաւիրուի ներկայ գտնուիլ սոյն կրօնա-ազգային պաշտաման ի յարգանս բիւրաւոր նահատակաց յիշատակին:

ԱԶԳ. ՀՈԳՍԵՅՆԻՐԶՈՒԹԻՒՆ

10 Հոկտ. 1899. Նիւ Եորք:

Լոյս տեսաւ ԱՌ 26ՈՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ Անգլիերէն և Հայերէն

Աշխատասիրեց ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

Հրատարակութիւն Էլիաս Սալաֆ և Ընկ. Նիւ Եորք

Կը պարունակէ շուրջ 25,000 բառեր, ընտիր Ամերիկեան արտասանութեամբ և խիստ զիւրազանգանալի բացատրութիւններով:

Գինն է \$2.50 Դիմել առ J. CHOOIJIAN, College Point, N. Y.

Գրքերը Հոկտ. 20էն վերջ ծախու պիտի գտնուին հետեւեալ անձերու քով. Մամալաթեան Եղարթ, Փաթրոն, Ն. Ճ. Յ. Պատմաճեան, Սթեյքլինկ, Ն. Ճ. Ապահուի Եղարթ, Չըլսի, Մասն. Ո. Կոստանդեան, Լորէնս, Մասն. Յ. Բարակեան, Աւսթըր, Մասն. Թ. Թօփրահանեան, Յրէզնօ, Գալ.

Ներկայիս կը խնդրեմ մեր բաժանորդներէն, որ հաճին իրենց Առ Չեռն Ամերիկեան Բառարանի բաժանորդագրութեանց ստացագրերը ինձ վերադարձնել իրենց ներկայ Հասցէովը միտին և սասնալ իրենց Բառարանը: Գրքերը պիտի զրկուին Հոկտ. 15էն վերջ:

Պ. Ռ. Թորոսեան 564 Clinton Ave. West Hoboken, N. J.

Կը ծախուի նաև խմբագրութեան քով:

Ա. ԺՈՂՈՎ ԵՒ ԵՌՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆԻ

Հայկական Ազատ Լսարանի Ա. Ժողովը տեղի կուենան յառաջիկայ կիրակի (22 Հոկտ.) Elx Hall ժողովարանին մէջ ի թիւ 19 W. 27րդ փողոց Պրօտուէյի սնկիւնը: Ժողովը կը բացուի ճիշդ ժամը 8ին և կը փակուի 10ին:

Ժողովը պիտի բանանք նիւթ ունենալով «Լսարանի Օգուաները»: Յետոյ պիտի խօսի Յարգելի Տօք. Գաբրիէլեան՝ նիւթ ունենալով «Չարագուստ»: Եւ յետոյ պիտի կատարուի Լսարանական վարչութեան մը ընտրութիւնը:

Կը փափաքենք որ Նիւ Եորքի Հայ երիտասարդութեան մասուր և բարոյական զարգացման նախաձեռնող իր ամեն Հայ փութայ ներկայ գտնուիլ ճիշդ որոշեալ ժամուան:

Թեմակալ Հովիւ ՍԱԴՎԱՐԴՅԱՆ

ՄԱՐԹԻՆ ԳԻՆՈ

Վաճառանոց տնական աճիւն կարգի կազ կարտեսաց:

Հայերը առկէ պատշաճաբոյն տեղ չեն կրնար գտնել գնելու, մահճակալ, մեթրէս, սեղան, ջեռոց, կարպետ և որ ի կարգին:

Հասցէն է՝ MARTIN KEENOW 79 Green St. ; Albany N. Y.

ԾԱՌՈՒՆ ԽԱՆՈՒԹ

331 E. 31րդ փողոցի նպարավաճառի խանութս կուզեմ ծախել շափաւոր գընով մը: Լաւ պատեհութիւն մ'է ազատ ու շահաւէտ գործ մ'ունենալ փափաքողներուն: Դիմել վերոյիշեալ Հասցէին:

ԾԱՌՈՒՆ ԽԱՆՈՒԹ

Պատեհութիւն որ կը գտնուի Պոսթօնի նշանաւոր փողոցներէն մէկուն մէջ, անձնական մասնաւոր խնդրոյ մը պատճառաւ կուզեմ ծախել: 4 տարիներէ ի վեր է որ միշտ շահաւոր առուտուր կընեմ, խանութիս մէջ կը ծախեմ ամեն տեսակ շաքարեղէններ, պաղպաղակ, սոսոս, սիկար և սիկարէթ, ամեն տեսակ լրագրիներ, պտուղ ևն. ևն.:


Լաւ պատեհութիւն մ'ըն է 2 ընկերով այսպիսի ազատ գործ մ'ընել: Դիմել հետեւեալ Հասցէին: S. M. Danielian 1027 Tremont St., Boston Mass.

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ս Ս, Տամպուրանեան 509 2րդ Ավելու. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արեւելեան և արևմտեան տմէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և ստօրեայ թարմ միտ:

Ուստի պատուական պըղուրը և ծեծածը փաւընտը 3 սէնթ, 25փաւընտ կամ աւելի գնողներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փաւընտը 15, իսկ մեծաքանակ գնողին համար 13 1/2 սէնթի: Ժիթապղան փաւընտը 10 շատ գնողներուն համար 9 սէնթի, ձիթապաղպաղի պատուական իւղին կէլընը \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի Հասցէին:



Գ Ե Ր Ձ Ա Կ ՅԱԿՈՒ ՌԻՉՈՒՆԵԱՆ 159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աճան հանդերձ կը փնտռէք, անհակ չէ. — մենք սուղ կը շինենք — բայց չէ. մեր գործին որքա՛ն աճան ըլլալը ատեն մը գործածուելէն ետքը միայն կրնաք հաճիալ. անոնք որ իրենց գրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զղջումը չեն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելուն համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ հարիւրին քառասուն աճան պատրաստի հանդերձ ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարգուկենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր Հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վրա գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

ՊԼՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Այս նոր ընկերութիւնը կ'արտադրէ շատ լաւ և աճան պղուր և ծեծած:

Մեծաքանակ գնողաց համար գինն է 2 1/2 սէնթ փաւընտը:

Մանրամասն տեղեկութիւն ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ Հասցէին:

NEW YORK BULGOOR MANUFACTURING CO. 226 TO 232 Clinton St. Hoboken n. J.

Ա Ձ Դ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցոյ մէջ նախագէս կազմուած Հայկազեան կաճառը տեղափոխուած և աւելի հաստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով իւր մարդութիւնները կը շարունակէ ի թիւ 498 Յրդ Ավելու 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը: